ՄԱՐԶՊԱՆԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

ՀԵՆՐԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Արշակունիների հայոց թագավորության անկումից (428 թ.) հետո Հայաստանում հաստատվեց մարզպանական վարչակարգը (428–630-ական թվականներ): Անկախ պետականության կորստով, միջազգային հարաբերություններում Սասանյան Պարսկաստանին ենթակա Մարզպանական Հայաստանը, թեև արդեն ինքնիշխան պետություն չէր, սակայն պարսկական սովորական նահանգ էլ չէր: Եղիշեն հաղորդում է. "Եւ իբրեաւ զնա եւս (Արտաշես Արշակունուն– Հ. Խ.) մերժեաց ի թագաւորութենէն, ի նախարարսն Հայոց անկանէր թագաւորութիւնն. զի թէպէտ եւ զանձն յարքունիս Պարսկաց երթայր, սակայն այրուձին Հայոց բովանդակ ի ձեռն նախարարացն առաջնորդէր ի պատերազմի"[1]:

Դատելով պարսից հազարապետ Միհրներսեհի՝ Հազկերտ Բ (438/439–457) արքայից արքային ուղղված խոսքերից՝ Հայաստանը տարածաշրջանում պահպանել էր իր կարևոր դերակատարությունը. "...արդ՝ քանի՞ աշխարհք են, որում դուք (պարսից արքան– Հ. Խ.) իշխէք աստուածաբար, եւ զոր սպանանել կամիք իշխէք եւ զորս կեցուցանել: Եւ նախ առաջին՝ որպէս Հայոց մեծ աշխարհն պիտոյ է եւ աւգտակար, եւ առ նմին Վրաց եւ Աղուանիցն ... վասն զի դուք ինքնին գիտէք եւ ամենայն Արիք՝ զաշխարհն Հայոց, թե ո՛րպէս մեծ է եւ պիտանի, եւ մաւտ եւ սահմանակից է կայսեր իշխանութեանն, եւ զաւրէնս եւ պաշտաւն զնոյն ունի, զի կայսր զիշխանութիւն նոցա ունի ... եւ յորժամ Հայք սերտիւ մեր լինին՝ Վիրք եւ Աղուանք այնուհետեւ մեր իսկ են"[2]:

Թագավորության անկման և կենտրոնական իշխանության չգոյության պայմաններում երկրի ներքին կյանքի տնօրինման գործում կարևոր դեր են կատարում նախարարները և եկեղեցին, քանզի շարունակում էին գործել նախարարական (սովորութային) և եկեղեցական (կանոնական) իրավունքները[3]: Այսինքն, թեև Սասանյանները Հայաստանում հաստատել էին իրենց վարչակար-

---

[1] *Եղիշէ. Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին (այսուհետև՝ Եղիշէ).– Մատենագիրք Հայոց, հ. Ա, Եդար, Անթիլիաս–Լիբանան, 2003, էջ 524:*

[2] *Ղազար Փարպեցի. Պատմութիւն Հայոց (այսուհետև՝ Ղազար Փարպեցի).– Մատենագիրք Հայոց, հ. Բ, Եդար, Անթիլիաս–Լիբանան, 2003, էջ 2240:*

[3] *Տե՛ս Գ. Ղազինյան, Ա. Վաղարշյան. Հայոց իրավունքի պատմության հիմնահարցերը. հին շրջանից մինչև մեր օրերը, Երևան, 2014, էջ 63:*

գը, ինչպես նաև փորձում էին երկիրը դարձնել պարսկական սովորական մարզ, սակայն նրանք չհասան իրենց նպատակին, և երկիրը պահպանեց իր ազգային դիմագիծը: Դրա հետևանքով թագավորությանը հաջորդող շրջանի Հայաստանը, իրավամբ, ստացել է "Նախարարական Հայաստան" անվանումը[4]:

Մինչ պետականության կորուստը՝ երկրի գլուխ կանգնած էր "թագաւոր Հայոց մեծաց" տիտղոսը կրող Արշակունի թագավորը[5]: Նա երկրի կառավարումն իրականացնում էր գործակալությունների միջոցով, որոնց ղեկավարները կոչվում էին գործակալներ: Պետական այդ պաշտոնները հիմնականում զբաղեցնում էին ավագ կամ մեծամեծ նախարարները: Երկրի կառավարման մեջ առավել կարևոր էին՝ "հազարապետություն", "սպարապետություն", "մարդպետություն", "թագադիր և թագակապ ասպետություն", "մաղխազություն", "մեծ դատավորություն", "սենեկապետություն", "շահապ" գործակալությունները: Իսկ բդեշխները, լինելով զինվորական պաշտոնյաներ, իրականացնում էին հայոց թագավորության սահմանների պաշտպանությունը՝ հյուսիսային և հարավային ուղղություններով:

Կային նաև այլ պաշտոններ, որոնք, սակայն, երկրի կառավարման մեջ էական նշանակություն չունեին: Անդրադառնանք Մարզպանական Հայաստանի գործակալություններին:

Մարզպանության մեջ ամենաբարձր պաշտոնյան մարզպանն էր, որը նշանակվում էր պարսից շահնշահի կողմից՝ հանդիսանալով նրա ներկայացուցիչը և երկրի կառավարիչը[6]: Մարզպանը վերահսկում էր տեղական իշխանությունների գործունեությունը, հավաքում հարկերն ու տուրքերը, պահպանում երկրի սահմանները: Նա միջնորդ էր տեղական ազնվականության և պարսից արքայից արքայի միջև[7], այսինքն՝ ներկայացնում էր Հայաստանն ու նրա շահերը պարսից արքունիքում: Եղիշեի "...ի նախարարսն Հայոց անկանէր թագաւորութիւնն"[8] հաղորդումից կարելի է եզրակացնել, որ թագավորից հետո երկրում իշխանությունն անցել էր հայ նախարարներին: Նրանց անմիջական գերական (սյուզերենը) արդեն պարսից արքայից արքան էր, քանզի թագավորության անկումով նրան էին անցել ոչ միայն արքունի տիրույթները, այլև՝ Հայոց թագավորի իրավունքները:

---

[4] *Տե՛ս Ն. Ադոնց. Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում: Քաղաքական կացությունը ըստ նախարարական կարգերի, Երևան, 1987, էջ 240–357:*

[5] *Փաւստոս Բուզանդ. Պատմութիւն Հայոց.– Մատենագիրք Հայոց, հ. Ա, Ե դար, էջ 291:*

[6] Э. Хуршудян. Армения и сасанидский Иран (Историко-культурологическое исследование). Алматы, 2003, с. 98–99.

[7] А. Колесников. О термине «марзбан» в Сасанидском Иране.– «Палестинский сборник», № 27 (Л.), 1981, с. 54–55.

[8] *Եղիշէ, էջ 524:*

Այսուհետև պարսից արքան էր հաստատում նախարարների գահը, նշանակում գործակալներ, տալիս պատիվներ և ոչ թե՝ մարզպանը:

Գալով իշխանության գլուխ՝ Սասանյանները նախ վերացրեցին Հայոց թագավորությունը, այնուհետև սկսեցին նախարարությունների թուլացման գործընթացը՝ այրուձին դուրս բերելով երկրից: Սկզբնական շրջանում պարսիկները պետք է զգույշ լինեին և, հնարավոր հուզումներից խուսափելու համար, փորձեին սիրաշահել հայ նախարարներին, ինչի հետևանքով էլ երկրի կարևոր գործակալություններն առժամանակ մնացին նրանց ձեռքում, իսկ Վասակ Սյունին, ով սկզբում Վրաց մարզպան էր կարգվել մոտ 437/439–441 թթ., ստանձնեց նաև Հայոց մարզպանի (441–451) պաշտոնը[9]: Դա նաև կապված էր Սասանյանների արտաքին խնդիրների հետ. նրանք Արևելքում պատերազմում էին քուշանների (հեփթաղներ) դեմ[10]:

Թագավորության անկումով "թագադիր ասպետություն", "սենեկապետություն" և "շահապ" գործակալությունները վերացան: Սակայն, ընդունված այն կարծիքի համաձայն, թե "մարդպետություն" գործակալությունը տոհմի հետ նույնպես վերացավ[11], տեղի ունեցավ հակառակը. պարսից արքունիքն անփոփոխ թողեց մարդպետության պաշտոնը, այն տարբերությամբ միայն, որ դրա կրողներն այսուհետև չէին ներքինացվելու: Այդ պաշտոնը հանձնվեց Արծրունիներին, որոնք սկսեցին կոչվել Մարդպետներ կամ Ռմբոսյաններ, իսկ նրանց ենթակայության տակ գտնվող 15 հազարանոց մարդպետական գունդը, որն ապահովում էր Մարզպանական Հայաստանի ներքին կարգն ու կանոնը, վերջիններիս դարձնում էր երկրում մարզպանից հետո երկրորդ դեմքը[12]:

---

[9] *Հ. Խաչատրյան. Հայոց մարզպանների կառավարման հարցի շուրջ.– ՀՀ ԳԱԱ "Լրաբեր հասարակական գիտությունների", 2017, № 1, էջ 50:*

[10] ***Տե՛ս*** В. Дмитриев. Всадники в сверкающей броне.– Военное дело Сасанидского Ирана и история римско-персидских войн. СПб., 2008, с. 214.

[11] *Տե՛ս Ն. Ադոնց. նշվ. աշխ., էջ 354,* А. Сукиасян. Общественно-политический строй и право Армении в эпоху раннего феодализма (III–IX вв.). Ереван, 1963, с. 297; *Վ. Վարդանյան. Արծրունիները հայոց պատմության մեջ, Երևան, 2002, էջ 33–34:*

[12] *Բ. Հարությունյան. Արծրունյաց իշխանական ընտանիքը հայոց պատմության մեջ, Երևան, 2016, էջ 81, նույնի՝ Մեծ Հայքի վարչա-քաղաքական բաժանման համակարգն ըստ "Աշխարհացույց"-ի, Երևան, 2001, էջ 388: Սակայն այս պաշտոնն Արծրունիները տնօրինեցին, հավանաբար, մինչև 484 թ.: Համաձայն Ղազար Փարպեցու հաղորդման՝ ընդառաջելով Վահան Մամիկոնյանի խնդրանքին, պարսից Վաղարշ արքայից արքան Կամսարական նախարարությանը շնորհեց տանուտիրական իշխանություն, իսկ Արծրունիներին՝ ոչ (Ղազար Փարպեցի, էջ 2368–2369): Ինչը կարծել է տալիս, որ "մարդպետ" տիտղոսը ևս չտրվեց Արծրունիներին, որոնք նախ պետք է ապացուցեին իրենց հավատարմությունը պարսից արքունիքին: Իսկ "Գիրք Թղթոց"-ում հանդիպող Ներսես Մարդպետական եպիսկոպոս կամ Գրիգոր սեպհական գնդին եպիսկոպոս ձևերը, ավելի շուտ արտահայտում*

“Սպարապետություն”, “հազարապետություն”, “մաղխազություն” և “մեծ դատավորություն” գործակալությունները նույնպես պահպանվեցին: Սասանյանները միտք չունեին վերացնել հայոց գործակալությունները. դա իմաստ էլ չուներ, քանզի հենց նրանց վարչական համակարգը կազմված էր նույն պաշտոնյաներից, որոնք, ճիշտ է, ունեին մասամբ տարբեր և իրավունքների ավելի լայն շրջանակներ[13]: Նրանք վարում էին շատ հեռատես քաղաքականություն. սպարապետությունը թողնելով հայ նախարարներին՝ դրանով ստանում էին իրենց հանդեպ հայերի ստորակայական պարտավորության կատարումը՝ հայոց այրուձին (այրուձիու հիմնական մասը) օգտագործելով քուշանների դեմ պատերազմում, ինչի հետևանքով երկիրը զրկվում էր ռազմական դիմադրություն ցուցաբերելու հնարավորությունից:

Մարզպանական Հայաստանի կառավարման համակարգի հիմնական օղակներն էին՝ “սպարապետություն”, “հազարապետություն”, “մաղխազություն” և “մեծ դատավորություն” գործակալությունները:

1. “Սպարապետությունը” շարունակում էր մնալ Մամիկոնյան տոհմի գործառույթը[14]: Մարզպանության սկզբնական շրջանում հայոց զինական ուժը, ինչպես հաղորդում է Եղիշեն, կազմել է մոտ 66.000[15]: Ն. Ադոնցը, հիմնվելով Սեբեոսի տեղեկության վրա, գրում է, որ Վահան Մամիկոնյանն ունեցել է 30.000 ընտիր սպառազինված զորք[16], դա տարածելով մարզպանական ամբողջ շրջանի վրա, որով ստացվել է, թե Մարզպանական Հայաստանի զինուժը կազմել է ընդամենը 30.000[17]: Մեր կարծիքով այդ մոտեցումն անընդունելի է, և պետք է տարբերակել մինչավարայրյան ու հետավարայրյան շրջանի Հայաստանի կարգավիճակը: Ըստ

են վարչական միավորի իմաստ: Այսինքն՝ Մարդպետական /Սեպհական/ Վասպուրական գնդի եպիսկոպոս, որը վարչական միավորի, տվյալ դեպքում՝ գնդի ներկայացուցիչն էր, որպիսին էր, օրինակ, Տարոնի կամ Սյունյաց եպիսկոպոսը:

[13] *Այս մասին տե՛ս* Э. Хуршудян. Государственные институты парфянского и сасанидского Ирана (III в. до н. э. – VII в. н. э.). Алматы, 2015.

[14] *Եղիշէ, էջ 605, 669, Ղազար Փարպեցի, էջ 2245:*

[15] *Եղիշէ, էջ 636:*

[16] *Սեբէոս. Պատմութիւն (այսուհետև՝ Սեբէոս).– Մատենագիրք Հայոց, հ. Դ, Է դար, Անթիլիաս–Լիբանան, 2005, էջ 469–470:*

[17] *Ն. Ադոնց, նշվ. աշխ., էջ 319–320: Չպետք է մոռանալ, որ Եղիշեի նշած 66.000 թիվը վերաբերում է միայն “ուխտապահ նախարարներին”՝ ապստամբության կողմնակիցներին: Բացի այդ, չէ որ հայոց այրուձիու մի մասն Արևելքում էր գտնվում՝ պարտադիր ծառայության մեջ, իսկ, եթե դրան էլ գումարենք Վասակ Սյունու և նրա կողմնակիցների զորքի թիվը, մարզպանական և մարդպետական գնդերը (յուրաքանչյուրը 15 հազար), մաղխազական թիկնապահ գունդը (10 հազար), բերդերում տեղակայված մշտական զորքերը, ապա կստանանք պատկառելի զինուժ:*

էության, Վարդան Մամիկոնյանի՝ Ավարայրի ճակատամարտում զոհվելուց հետո՝ մինչև Վահանանց ապստամբությունը, Հայաստանում սպարապետ չկար: 482–505 թթ. սպարապետ էր Վահան Մամիկոնյանը[18]: Նրանից հետո որևէ մեկը չի հիշատակվում մինչև Դվինի երկրորդ ժողովը (554/555 թ.)[19], որի վավերաթղթում արձանագրված է "Սամէղ յԱրտաւազդան սպարապետ"-ի անունը[20]:

572 թ. սկսված ապստամբության ժամանակ սպարապետը Վարդան Մամիկոնյանն էր[21], ով պաշտոնավարեց մոտավորապես մինչև 576/577 թ.[22]: Ասողիկի հաղորդումը, որ "Ընդ որ զայրացեալ Վարդանայ բդեշխի որդւոյ Վասակայ, որ էր յազգէն Մամիկոնէից..."[23], առաջացնում է մի քանի հարցադրում. արդյո՞ք պետք է "բդեշխ" տիտղոսը հասկանալ սպարապետ իմաստով կամ Վարդանի հայրը՝ Վասակ Մամիկոնյանը, նույնպե՞ս սպարապետ էր, և, վերջապես, բյուզանդական

---

[18] *Հակառակ Կ. Յուզբաշյանի այն կարծիքի, որ Վահան Մամիկոնյանը սպարապետ է եղել 482 թվականից առաջ (տե՛ս* К. Юзбашян. Армянские государства эпохи Багратидов и Византия IX–XI вв. М., 1988, с. 13*), փաստենք, որ համաձայն Ղազար Փարպեցու՝ "մինչեւ ինքն իսկ թագաւորն Պերոզ գլխովին ծանեաւ զնա եւ առ լաւս ունէր, եւ յանդիման ամենեցուն գովէր եւ արժանի պատուոյ հաշուէր: Բայց արժանի ըստ նորա իմաստիցն եւ քաջութեանն թէպէտ եւ ածէր զմտաւ պատուէլ զնա, այլ յիշելով զհարցն եւ զնախնեացն նորա զիրս եւ զգործս, ո՛րպէս հանապազ ընդդիմութեամբ եւ պատերազմաւ աշխատ կալեալ էր զնոսա՝ յապաղեալ կասէր, եւ լուեալ թագուցանէր զարժան պատիւ տալ նոցա" (Ղազար Փարպեցի, էջ 2307): Պատմիչը Վահան Մամիկոնյանին սպարապետ է կոչում, երբ "Ազդ եղեւ առ տէրն Բագրատունեաց Սահակ, զոր Հայք եւ զաւրավարն Հայոց Վահան ի ժամանակին յայնմ մարզպան կարգէին Հայոց. ասպետն Սահակ՝ զմարզպանութիւնն, եւ Վահան՝ զտէրութիւնն Մամիկոնէից եւ զսպարապետութիւնն Հայոց" (նույն տեղում, էջ 2316):*

[19] *Տե՛ս Կ. Մելիքյան.* "Narratio de rebus Armeniae" *Հայ-քաղկեդոնական երկը վաղ միջնադարյան հայոց եկեղեցու պատմության կարևոր սկզբնաղբյուր, Երևան, 2007, էջ 65–90, նույնի՝ Հայոց եկեղեցու դիրքն Ընդհանրական քրիստոնեական եկեղեցու համակարգում IV–VI դարի I կեսին, Երևան, 2016, էջ 205: Վ. Վարդանյանը որպես եկեղեցաժողովի թվական ընդունում է 554 թ. (տե՛ս Վ. Վարդանյան. Հայոց եկեղեցին վաղ միջնադարի քաղաքական խաչուղիներում, Վաղարշապատ, 2005, էջ 242):*

[20] *Ներսէս Բագրեւանդացի.– Ուխտ միաբանութեան Հայոց աշխարհիս ի ձեռն Ներսէսի Հայոց կաթուղիկոսի, եւ Մերշապհոյ Մամիկոնէից եպիսկոպոսի, եւ Պետրոսի Սիւնեաց եպիսկոպոսի, եւ այլոց աթոռակցաց, եւ տանուտերանց, եւ ազատաց, եւ համաւրէն ժողովրդականաց.– Մատենագիրք Հայոց, հ. Գ, Զ դար, Անթիլիաս–Լիբանան, 2004, էջ 420:*

[21] *Վ. Իսկանյան. Հայ-բյուզանդական հարաբերությունները IV–VII դդ., Երևան, 1991, էջ 249, 302:*

[22] *Վ. Իսկանյանը Խոսրով Անուշիրվանի՝ Հայաստան ձեռնարկած արշավանքը, որն ուղղված էր Վարդան Մամիկոնյանի դեմ, թվագրում է 576 թ. վաղ գարնանը (նույն տեղում, էջ 303). դրանից հետո վերջինիս մասին աղբյուրները լռում են:*

[23] *Ստեփանոս Տարաւնեցի Ասողիկ. Պատմութիւն Տիեզերական (այսուհետև՝ Ասողիկ).– Մատենագիրք Հայոց, հ. ԺԵ, Ժ դար, Երևան, 2011, էջ 691:*

պատմիչների հիշատակած Մանվել Մամիկոնյանը, որին սպանել էր Սուրեն մարզպանը[24], եղբորից՝ Վարդան Մամիկոնյանից առաջ եղե՞լ է սպարապետ: Յավոք, աղբյուրները մեզ այդ տեղեկությունը չեն տալիս:

591 թ. Հայաստանի երկրորդ բաժանմամբ փոխվում է նաև Հայոց սպարապետի կարգավիճակը: Դեռևս 572 թ. սկսված հայոց ապստամբությունը, այնուհետև դրան հաջորդած պարսկաբյուզանդական պատերազմը, ինչպես հայտնի է, ավարտվեց 591 թ. հաշտության կնքմամբ: Այնուհետև, Մավրիկիոս (Մորիկ) կայսեր (582–602) եկեղեցական ու ռազմավարչական վերափոխումների արդյունքում հայ նախարարների գլխավորությամբ տեղի ունեցան մի քանի ապստամբություններ[25], որից հետո՝ 602–628 թթ., պարսկաբյուզանդական նոր պատերազմի վերսկսմամբ երկիրը կրկին դարձավ ռազմական բախումների թատերաբեմ: Եվ Հայոց սպարապետ, որպես Մարզպանական Հայաստանի զինված ուժերի հրամանատար, ինչպիսին էր, օրինակ, VI դ. Վարդան Մամիկոնյանը, արդեն չկար: Նրան փոխարինելու է գալիս այդ շրջանում՝ 591–641 թթ., "զաւրավարն Հայոց" ձևը, որը, ինչ խոսք, օգտագործվում է V դ. հայ մատենագիրների կողմից "սպարապետ" եզրույթին զուգահեռ: Այսինքն, եթե այս ժամանակահատվածի զորավարներին Հայոց սպարապետ համարենք, ապա դա կնշանակի, որ Մարզպանական Հայաստանի սպարապետը նաև Բյուզանդիային անցած հայկական տարածքների, տեղի նախարարությունների սպարապետն էր: Սա թվում է անհավանական, մանավանդ Մավրիկիոսի հայահալած քաղաքականությունից ելնելով, եթե հաշվի առնենք նաև, որ 591 թ. բաժանումից հետո միայն Թեոդորոս Ռշտունուն հաջողվեց վերամիավորել Հայաստանի երկու հատվածները, ապա պատկերը կամբողջանա:

Սեբեոսը 637 թ. Քաղիսիայի ճակատամարտի մասնակից է հիշատակում Դավթի որդի Մուշեղ Մամիկոնյանին, ով Հայոց զորավար էր[26]: Հերակլ կայսրին (610–641) հաջորդեց որդին՝ Կոստանդին III-ը (641), իսկ Հայոց աշխարհում զորավար չընտրվեց, որովհետև իշխանները, պառակտվելով իրարից հեռացան[27]: Նույն կայսրը 641 թ. Թեոդորոս Ռշտունուն տվեց "զաւրավարութիւն՝ հանդերձ պատրկութեան պատուով"[28]:

---

[24] Վ. Իսկանյան. նշվ. աշխ., էջ 280:

[25] Այս մասին տե՛ս նույն տեղում, էջ 370–416:

[26] Սեբէոս, էջ 530:

[27] Նույն տեղում, էջ 531:

[28] Նույն տեղում, էջ 532, Յովհաննէս Դրասխանակերտցի. Պատմութիւն Հայոց.– Մատենագիրք Հայոց, հ. ԺԱ, Ժ դար, Անթիլիաս–Լիբանան, 2010, էջ 409, Ասողիկ, էջ 696:

2. “Հազարապետությունը” ղեկավարում էր Վահան Ամատունին[29]: Սակայն պարսիկ Դենշապուհ պաշտոնյան, 447–449 թթ. ընթացքում[30] աշխարհագիր անցկացնելով, ոչ միայն ծանրացրեց հարկերն ու եկեղեցին դարձրեց հարկատու, այլև “հազարապետության” ու “մեծ դատավորության” գործակալությունները վերցրեց Վահան Ամատունուց և կաթողիկոսի տեղապահ Հովսեփ Ա Հողոցմեցուց (439–452) ու հանձնեց պարսիկներին[31]: Ղազար Փարպեցին 482 թ. դեպքերին անդրադառնալիս Վեհվեհնամ պարսիկին հիշատակում է որպես “Հազարապետ Հայոց”[32]: Թվում է, թե խլված գործակալությունները 484 թ. կնքված Նվարսակի պայմանագրով պետք է որ վերականգնվեին, սակայն Բաբգեն Ա Ոթմսեցի (490–516) կաթողիկոսի կողմից հրավիրված Դվինի առաջին՝ 506 թ., ժողովի՝ մեզ հասած երկու վավերաթղթերում էլ հազարապետի պաշտոնով նախարար չի հիշատակվում[33]: Դա կարող է նշանակել, որ հազարապետը պարսիկ էր, որին չէին թույլատրել մասնակցել Հայոց եկեղեցաժողովին:

Թեպետ Դվինի առաջին ժողովի վավերաթղթերում թվարկված նախարարների հաջորդականությունից անուղղակի տպավորություն է ստեղծվում, որ հազարապետը Սահակ Կամսարականն էր, քանզի երկու վավերաթղթում էլ վերջինս անմիջապես հաջորդում է Վարդ Մամիկոնյանին[34]: 553 թ. “Սուրբ Հիզտիբուզիտի վկայաբանության” մեջ հիշատակված է “հազարապետ Հայոց” պաշտոնյան[35], սակայն հետաքրքիրն այն է, որ Դվինի երկրորդ ժողովին մասնակից իշխանների շարքում հազարապետը դարձյալ բացակայում է[36]: Ստեփանոս Ասողիկը հաղորդում է, որ պարսից Խոսրով Ա Անուշիրվան (531–579) արքայից արքան, իր ազգական Սուրեն Ճիհովր-Վշնասպին հանում է Հայոց հազարապետի պաշտոնից և

---

[29] *Եղիշէ, էջ 544, Մովսէս Խորենացի. Հայոց Պատմութիւն (այսուհետև՝ Մովսէս Խորենացի).– Մատենագիրք Հայոց, հ. Բ, Ե դար, Անթիլիաս–Լիբանան, 2003, էջ 2112–2113:*

[30] *Հ. Հարությունյան. Վարդանանց պատերազմը, Երևան, 1947, էջ 84:*

[31] *Եղիշէ, էջ 543–544:*

[32] *Ղազար Փարպեցի, էջ 2314:*

[33] *Բաբգէն կաթողիկոս Ոթմսեցի. Թուղթ Հայոց ի Պարսս, առ ուղղափառս [Ա, Բ].– Մատենագիրք Հայոց, հ. Գ, Զ դար, Անթիլիաս–Լիբանան, 2004, էջ 117–124:*

[34] *Առաջին վավերաթղթում՝ “… եւ ի բարեպաշտ պետաց եւ իշխանաց Հայաստան աշխարհիս, որ բերեն զուղղափառ հաւատ յինքեան, Վարդ Մամիկոնեան, Սահակ Կամսարական Արշարունեաց տէր, Սպանդիատ Հայոց ասպետ, Արտաշիր Հայոց մախազ...” (նույն տեղում, էջ 117), և երկրորդում՝ “… եւ յիշխանաց ի Վարդայ Մամիկոնից Տեառնէ եւ ի Հայոց Մարզպանէ, եւ ի Սահակայ Կամսարականէ եւ յԱրտաշրէ Մաղխազէ, եւ յամենայն ազատաց մեծամեծաց եւ փոքունց...” (նույն տեղում, էջ 122):*

[35] *Ներսէս Ռաժիկ. Վկայաբանութիւն սրբոյն Յիզտիբուզտեայ.– Մատենագիրք Հայոց, հ. Գ, Զ դար, էջ 461:*

[36] *Ներսէս Բագրեւանդացի, էջ 420:*

կարգում մարզպան[37]: Այնուհետև պատմիչը շարունակում է՝ գրելով, թե Սուրենի սուսերահար լինելուց հետո արքայից արքան Հայաստանում պարսիկ մարզպան չի կարգում, այլ նախարարների խնդրանքով Հայոց իշխան է հաստատում Դավիթ Սահառունուն, ով Խոսրովի որդու՝ Որմիզդ արքայից արքայի (579–590) հրամանով վարեց հազարապետությունը շուրջ 30 տարի[38]: Ստեփանոս Ասողիկն իրավացի է այնքանով, որքանով Սուրենից հետո մարզպաններ չեն նշանակվում, քանզի 572 թ. սկսած Հայաստանը պարսկաբյուզանդական պատերազմների ռազմաբեմ էր դարձել: Արդյոք կարե՞լի է պատմիչի հիշատակած հազարապետությունը հասկանալ մարզպանի իմաստով և Դավիթ Սահառունուն համարել մարզպան: Մեր կարծիքով՝ ոչ, որովհետև, ինչպես նշեցինք, Խոսրովն իր ազգական Սուրենին, հանելով հազարապետի պաշտոնից, կարգում է մարզպան, այսինքն՝ այդ երկու պաշտոնները շփոթել պատմիչը չէր կարող, քանի որ իր շարադրանքում բազմիցս կիրառում է "մարզպան" եզրույթն իր նշանակությամբ:

Է. Դանիելյանը, Դավիթ Սահառունու՝ VII դ. սկզբին մարզպան լինելու հանգամանքը բացառելով, գտնում է, որ նա VI դ. 80-ական թվականներին Արևելյան Հայաստանում վարել է հազարապետի պաշտոնը[39]: Նկատենք, որ Ասողիկի "Պատմության"՝ Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի թիվ 3502 ձեռագիրն ունի "զաշխարհս" փոխանակ "զհազարապետութիւն" ընթերցումը, որից ստացվում է, թե "Իսկ յետ սուսերահարն լինելոյ Սուրենայ ոչ եւս պարսիկ մարզպան առաքէր ի Հայս թագաւորն Պարսից. այլ ի խնդրոյ նախարարացն իշխան հաստատէ Հայոց զԴավիթ Սահառունի, որ կալաւ զաշխարհս Հայոց ամս Լ հրամանաւ Որմզդի, որդւոյ Խոսրովու Պարսից արքայի"[40]: Այս տեղեկությունը, որն ի դեպ Սեբեոսից քաղագրությունն է, չի կարելի արժանահավատ համարել: Նախ, ինքնին երեսուն տարվա իշխանությունն արդեն իսկ իրատեսական չէ, և երկրորդ՝ այս հաղորդումից ստացվում է, թե Հայոց իշխանը միաժամանակ իրականացրել է նաև հազարապետի գործառույթներ, ինչը հավանական չի թվում: Սա չպետք է շփոթել VII դ. Հայոց իշխանի այն կարգավիճակի հետ, երբ վերջինս երբեմն ստանձնում էր նաև սպարապետի պաշտոնը[41]: Բերենք Սեբեոսի տեղեկությունը. "Իսկ թագաւորն առնէ ըստ խնդրոյ իշխանացն զնա (Դավիթ Սահառունուն– Հ. Խ.) իշխան ի վերայ ամենայն աշխարհացն, եւ տայ նմա պատիւ կիւրապաղատութեանն, եւ հաստատէ զնա ի ծառայութիւն իւր, եւ կալեալ զիշխանութիւնն ամս Գ (երեք տարի– Հ. Խ.) ա-

---

[37] *Ա ս ո ղ ի կ, էջ 691:*

[38] *Նույն տեղում, էջ 692:*

[39] *Է. Դ ա ն ի ե լ յ ա ն. Հայաստանի քաղաքական պատմությունը և հայ Առաքելական եկեղեցին (VI–VII դդ.), Երևան, 2000, էջ 146:*

[40] *Մ. Մաշտոցի անվան Մատենադարան, № 3502 ձեռագիր (1663 թ.), էջ 260ա:*

[41] *Հայ ժողովրդի պատմություն, հ. II, Երևան, 1984, էջ 320:*

մենայն ճոխութեամբ մեծապէս”[42]: Մեջբերենք նաև Ասողիկի հաղորդածը. “Իսկ յետ սուսերահարն լինելոյ Սուրենայ ոչ եւս պարսիկ մարզպան առաքէր ի Հայս թագաւորն Պարսից (Խոսրով Անուշիրվանը– Հ. Խ.). այլ ի խնդրոյ նախարարացն իշխան հաստատէ Հայոց զԴաւիթ Սահառունի, որ կալաւ զհազարապետութիւն Հայոց ամս Լ հրամանաւ Որմզդի, որդւոյ Խոսրովու Պարսից արքային”[43]:

Ինչպես տեսնում ենք, Ասողիկի մոտ կայսեր փոխարեն հանդես է գալիս պարսից արքան, ով հայ իշխան-նախարարների խնդրանքով Դավիթ Սահառունուն կարգում է Հայոց իշխան: Պատմիչի հիշատակած Հայոց իշխանն այստեղ պետք է հասկանալ կուրոպաղատ իմաստով, որովհետև Հայոց իշխանը կրում էր պատրիկ կամ կուրոպաղատ տիտղոսները[44]: Այսինքն՝ խոսքը VII դ. բյուզանդական Հայաստանում կուրոպաղատ կարգված Դավիթ Սահառունու մասին է և ոչ թե՝ VI դ. Դավիթ Սահառունու, ով, ամենայն հավանականությամբ, պատմական անձ չէր: “Հազարապետություն” պաշտոնի գոյությունը VI դ. վերջին և VII դ. չի բացառվում, քանզի այդ կարևոր գործակալության միջոցով էր իրականացվում երկրի ֆինանսատնտեսական և հարկային հարցերի վերահսկումն ու կարգավորումը:

3. Մարզպանական շրջանում “մաղխազությունը” ևս զբաղեցնում էին Խոռխոռունիները[45], ովքեր պատասխանատու էին Հայոց մարզպանի անվտանգության համար: 444 թ.[46] Շահապիվանի եկեղեցաժողովի մասնակիցների շարքում հիշատակված է մաղխազ Վրիվ Խոռխոռունին[47], ինչը նաև՝ Ղազար Փարպեցու մոտ է[48]: Այնուհետև, Վարդանանց ապստամբության ժամանակ հայոց մաղխազն էր Գաղիշո Խոռխոռունին, ով Եղիշեի ու Ղազար Փարպեցու աշխատություններում անվանապես այդպես չէր կոչվում[49]: Սակայն եթե հաշվի առնենք, որ նույն Գաղիշոն Վասակ Սյունու կողմնակիցներից էր, ում փոխարեն մի կարճ ժամանակով մաղխազի պաշտոնը ստանձնեց նրա ազգական Խորեն Խոռխոռունին[50], ապա պարզ է,

---

[42] *Սեբէոս, էջ 527:*

[43] *Ասողիկ, էջ 692:*

[44] *Ա. Տեր-Ղևոնդյան. Հայոց իշխան տիտղոսի ծագումը և Հայոց տերությունը VII դարում.– “Բանբեր Երևանի համալսարանի”, 1969, № 1, էջ 243–244:*

[45] *Ղազար Փարպեցի, էջ 2308, 2317:*

[46] *Կ. Մելիքյան. Հայոց եկեղեցու դիրքն Ընդհանրական քրիստոնեական եկեղեցու համակարգում IV–VI դարի I կեսին, էջ 165: Վ. Վարդանյանը Շահապիվանի եկեղեցաժողովի թվականն ընդունում է 447 թ. (Վ. Վարդանյան. Հայոց եկեղեցին վաղ միջնադարի քաղաքական խաչուղիներում, էջ 184):*

[47] *Կանոնագիրք Հայոց.– Մատենագիրք Հայոց, հ. Է, Ը դար, Անթիլիաս–Լիբանան, 2007, էջ 599:*

[48] *Ղազար Փարպեցի, էջ 2242: Ճիշտ է, Փարպեցու մոտ այն* Վրիմ *ձևով է:*

[49] *Եղիշէ, էջ 567, 627, Ղազար Փարպեցի, էջ 2245, 2263:*

[50] *Ղազար Փարպեցի, էջ 2268:*

որ Գաղիշոն ևս պետք է լիներ մաղխազ: Համաձայն Ղազար Փարպեցու, պարսից արքայից արքա Պերոզի (459–484) օրոք մաղխազ էր նույն Գաղիշո Խոռխոռունին[51]: 482 թ. ապստամբության ժամանակ այդ պաշտոնում կարգված էր Գարջոյլ Խոռխոռունին[52]: Դվինի առաջին ժողովի վավերաթղթում հիշատակված է Արտաշիր Հայոց[53], իսկ Դվինի երկրորդ ժողովում՝ Գարջոյր Հայոց մաղխազները[54]: Մինչև 572 թ. ապստամբությունը և դրան հաջորդող շրջանում էլ այս պաշտոնի մասին աղբյուրներում հիշատակություն չենք գտնում: Քանի որ Հայաստանում մարզպան չկար (572 թվականից հետո միայն 628 թ. մարզպան նշանակվեց Վարազտիրոց Բագրատունին), վերանում էր նաև "մաղխազական" գործակալության անհրաժեշտությունը, որը մինչև VI դ. կեսերը ղեկավարում էին Խոռխոռունի նախարարները:

4. "Մեծ դատավորությունը" գտնվում էր Հայոց կաթողիկոսի ձեռքում[55]: Մարզպանական շրջանում մեծանում է Հայոց եկեղեցու դերը՝ ի դեմս կաթողիկոսի: Եկեղեցին՝ որպես արդեն առանձին մի կառույց, սկսել էր ձեռք բերել պետահրավական գործառույթներ, քանզի "մեծ դատավորի" պաշտոնը կաթողիկոսին օժտում էր պատիժ սահմանելու և այն իրագործելու լիազորությունով[56]: Արշակունյաց շրջանի աշխարհաժողովներին արդեն փոխարինում էին եկեղեցաժողովները, որոնց մասնակցում էին ոչ միայն հոգևորականներ, այլև՝ նախարարներ: Այդպիսով այդտեղ կայացված որոշումները պարտադիր էին դառնում հոգևոր և աշխարհիկ իշխանությունների համար: Երկրի ներքին կյանքում, եթե հիմնական դերակատարը հայ նախարարներն էին, ապա արտաքին հարաբերություններում առաջատարը Հայոց եկեղեցին էր: Հարկ եղած դեպքում կաթողիկոսը՝ որպես երկրի ներկայացուցիչ, բանակցությունների մեջ էր մտնում այլ երկրների տիրակալների հետ՝ ստանալով որոշակի առանձնաշնորհումներ ու կրոնաքաղաքական հանդուրժողականություն[57]:

Սասանյան արքաները, հաշվի առնելով Հայաստանում կաթողիկոսի ազդեցիկ դիրքը, փորձում էին նրան պահել հսկողության տակ և սահմանափակել նրա իրավազորությունները, որի արդյունքում կիրառվեց Հայոց կաթողիկոսին հակաթոռ կարգելու քաղաքականությունը: Մովսես Խորենացին հաղորդում է. "Վասն ո-

---

[51] *Նույն տեղում, էջ 2308:*

[52] *Նույն տեղում, էջ 2317:*

[53] *Բարգէն կաթողիկոս Ողմսեցի. նշվ. աշխ., էջ 117, 122:*

[54] *Ներսէս Բագրեւանդացի, էջ 420:*

[55] *Տե՛ս Եղիշէ, էջ 544, Ղազար Փարպեցի, էջ 2309–2310:*

[56] *Տե՛ս Վ. Վարդանյան. Հայոց եկեղեցին վաղ միջնադարի քաղաքական խաչուղիներում, էջ 185:*

[57] *Տե՛ս նույն տեղում, էջ 10:*

րոյ հաւանեալ Վռամայ՝ զերկաքանչիւրոցն կատարեաց զխնդիրս, տուեալ յաթոռ եպիսկոպոսապետութեանն զայլ ոմն ասորի, Շամուէլ անուն, զի լիցի ընդդիմափառ մեծին Սահակայ եւ հակառակաթոռ. եւ գործ նմա զատուցանէ զընկերել մարզպանին, կալ ի վերայ բաշխից հարկաց խնդրեցելոց եւ դատաստանաց եւ այլ աշխարհական կարգաց”[58]: Ասորի Հայոց կաթողիկոսների վրա Սասանյանների ազդեցությունը, ինչպես հայտնի է, մեծ էր, ու թեև արքան կարող էր Հայոց կաթողիկոսին զրկել գործակալությունից ու կաթողիկոսությունից[59] (ինչպես դա եղավ Սահակ Պարթևի և Գյուտ Արահեզացու պարագայում) կամ ստեղծել նրան հակաթոռ, այդուհանդերձ, նա շարունակում էր հանդիսանալ հեղինակություն՝ երկրի բախտորոշ հարցերում ունենալով իր գործուն դերը և ժողովրդի համար լինելով հոգևոր հայրապետ:

447–449 թթ. Հազկերտ Բ արքայի հրամանով կաթողիկոսի տեղապահը, փաստացի նույն կաթողիկոսը, զրկվեց “մեծ դատավորի” գործակալությունից, որը, ըստ էության, վերականգնվեց արքայից արքայի դրածոներ՝ Մելիտե (452–456) և Մովսես (456–461) Աղբիանոսյանների օրոք: 461 թ. կաթողիկոս ընտրված Գյուտ Արահեզացին (461–478) նույնպես վարում էր այդ պաշտոնը: 484 թ. Նվարսակի պայմանագրով Եկեղեցին ձեռք բերեց ազատություն, քանզի հաշտության կետերից մեկն էլ վերաբերում էր Հայոց եկեղեցու անկախ կարգավիճակին: Կավադ Ա (488–496 և 498/499–531) արքան, երբ հայերն ապստամբել էին վերջինիս դեմ, հարկադրված էր ճանաչել Հայոց եկեղեցու ինքնուրույնությունը[60]: Իսկ Խոսրով Անուշիրվան արքան, համաձայն Փոտ պատրիարքի հղած թղթի, Հայոց եկեղեցուն (հասկանալի է, որ կաթողիկոսին) վերապահեց Հայոց աշխարհի հարկահանության գործը տնօրինելու իրավունքը[61]: Ճիշտ է, օտար տիրակալները միշտ էլ ցանկացել են այս կամ այն կերպ իրենց ազդեցության ոլորտում պահել կամ կախման մեջ գցել Հայոց եկեղեցին (հենց նույն Խոսրով Անուշիրվան արքան փորձեց Դվինում ատրուշան կառուցել և կրկին զրադաշտականություն պարտադրել հայերին), այնուամենայնիվ, որպես երկրի մեջ ինքնուրույն և ինքնատիպ կառույց, հայ նախարարների հետ կարողացավ պահպանել ազգային դիմագիծը՝ մարմնավորելով Հայոց կորսված պետականությունը:

---

[58] *Մովսէս Խորենացի, էջ 2105:*

[59] *Նկատենք, որ Հայաստանը, կամենար, թե ոչ, գտնվում էր Պարսկաստանի վարչական կազմում և կաթողիկոսի հաստատումն արքայի կողմից, թեկուզ ձևականորեն, անհրաժեշտ էր: Չմոռանանք, որ նախարարները տանուտիրական իշխանություն էին ստանում և հաստատվում կամ զրկվում հենց պարսից արքայի կողմից:*

[60] *Վ. Վարդանյան. Հայոց եկեղեցին վաղ միջնադարի քաղաքական խաչուղիներում, էջ 234:*

[61] *Նույն տեղում, էջ 255:*

Այսպիսով, մարզպանական շրջանի Հայաստանում որոշակի փոփոխություններով պահպանվեց թե՛ Արշակունյաց թագավորության կառավարման համակարգը, այդ թվում՝ նախարարների հողատիրական ժառանգական իրավունքները, թե՛ երկրի կառավարման մեջ նրանց մասնակցությունը (հետագայում այն սահմանափակվեց) և թե՛ Հայոց եկեղեցու կարգավիճակը: Դրա շնորհիվ էլ Հայաստանը պահպանել էր ներքին ինքնավարությունը:

СИСТЕМА ПРАВЛЕНИЯ МАРЗПАНСКОЙ АРМЕНИИ

ГЕНРИК ХАЧАТРЯН

Резюме

После падения династии Аршакуни (428 г.) Армения, хотя не была суверенным государством, но, согласно армянским источникам, сохранила свою внутреннюю автономию в лице нахараров (князья, которые сохранили свои родовые и земельные права) во время марзпанского периода (428–630-е годы), представленного институтами *тысяцкий, главный военачальник, глава отряда телохранителей правителя и великий судья*. В отсутствие центрального правительства Армянская церковь и эти институты выполняли все функции потерянной государственности. Благодаря этому Армения сохранила свою внутреннюю автономию на протяжении всей марзпанской эпохи.

THE GOVERNING SYSTEM OF ARMENIAN MARZPANATE

HENRIK KHACHATRYAN

Summary

After the fall of Arshacid-Arshakuni's dynasty (428), although Armenia was not a sovereign country, nevertheless, according to Armenian sources the country succeeded in preserving nearly intact its native *naxarar* social structure during the *marzpanate* period (the 428s–630s), represented by the institutions of *hazarapet*, *sparapet*, *maghkhazh* and the *Great Judge,* which were all occupied by Armenians. In the absence of the central government, the Armenian Church and these institutions embodied and carried out all the duties of the lost government. Thanks to this, Armenia preserved its internal self-governing system throughout the *marzpanate* era.